Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ամենայն Հայոց

14017

# ԿԱՆՈՆ

## Ս. ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԻ,

### 30 սեպտեմբ. 1912 ամի.

Սեպտեմբերի 30-ին, առաւօտեան ժամի 8-ին եպիսկոսները պէտք է ժողովուին Վեհարան զգեստաւորուելու, իսկ մնացեալ եկեղեցական դասը՝ եկեղեցի պատրաստուելու և ընդառաջելու եպիսկոպոսներին, որոնք ժամի 9-ին զգեստաւորուած, իւրաքանչիւրի ձեռքում սրբազան մասունքներ ընած, երկկարդ, Սրբազնագոյն Հայրապետի դլխաւորութեամբ, խաչ ու խաչվառով, Վեհարանից իջնելու են Տաճար հետևեալ կարգով.

Ա. Առջևից գնալու են խաչվառակիրները, լապտերակիրները և խաչակիրները իսկ նրանց յետևից՝ դպիրները.

Բ. Երկու կարմրազգեստ շաթիրներ իրենց ցուպերով.

Գ. Հայրապետական խաչ և դաւազանակիր երկու վարդապետներ.

Դ. Հոգևորական դասը շուրջառներով.

Ե. Եպիսկոպոսներ աջից

1. Տ. Խորէն եպիսկոպ.—Ս. Աւետարան
2. Տ. Կարապետ եպիսկոպ.—անօթ Նուիրոց Միւռոնի
3. Տ. Աշոտ եպսկ.—աջ ս. Արիստակէս Հայրապետի
4. Տ. Յուսիկ արքեպ.—աջ ս. Յակոբայ Մծբ. Հայրպ.
5. Տ. Յովհաննէս արքեպ.—աջ ս. Հօրն մերոյ Գրիգ. Լուս.
6. Տ. Ներսէս արքեպ.—կենաց փայտ.

Եպիսկոպոսներ ձախից

1. Տ. Եփրեմ եպիսկոպ.—անօթ Բալասանի
2. Տ. Մեսրոպ եպիսկ.—ազանի հին Միւռոնի
3. Տ. Մխիթար եպիսկ.—աջ ս. Յակոբայ առաք. Ալփեայ
4. Տ. Սարգիս եպիսկ.—աջ ս. Թովմայ առաքելոյ
5. Տ. Անանիա արքեպ. աջ ս. Թադէոսի առաքելոյ
6. Սուքիաս արքեպ. Ասատուածամուխ ս. Գեղարդ.

Զ. Երկու բուրվառակիր վարդապետներ

Է. Հայրապետական երկու քղամիրներ

Ը. Ամպհովանի կրող չորս իշխաններ

Թ. Քշոցակիր չորս սարկաւագներ,

Ժ. Թափորի գլուխը, ամպհովանու տակ. լինելու է Վեհափառ Ս. Հայրապետը, իսկ յետևից՝ երկու քղանցակիր վարդապետներ, Լուսաբարապետը և Դաւազանակիրը։

~~2524~~



1801

ԺԱ. Զանգահարութեամբ և «Խորհուրդ խորի»ի երգեցողութեամբ թափորը Վեհարանից իջնելու է Տաճար և կանգնելու է աւագ ս. սեղանի առաջ, ուր կատարուելու է լուացման կարգը, որից յետոյ պատարագիչ սրբազնագոյն Հայրապետը կատարելով մնացած կարգերը, 12 եպիսկոպոսների առաջնորդութեամբ, հիւսիսային սանդուխներով բարձրանում է աւագ բեմը և շարունակում ս. պատարագը.

ԺԲ. Նախ քան «Ողջոյնը» Ս. Հայրապետը բազմելով աթոռի վերայ, սեղանի հիւսիսային կողմում, շրջապատուած աջից և ձախից 12 եպիսկոպոսներով, կատարում է ս. Միւռոնի օրհնութեան կարգը ըստ այսմ.

ԺԳ. Տ. Սուքիաս արքեպ. կարդում է ծննդոց գիրքը. «Եւ եղև յետ քառասուն աւուր» (Մաշտոց երես 10)։

ԺԴ. Տ. Ներսէս արքեպիսկ.—Գիրք ելից. «Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի» (երես 11).

ԺԵ. Տ. Անանիա արքեպիսկ.—Թուղթ Յովհաննու առաքելոյ. «Եւ դուք օծութիւն ունիք» (եր. 11).

ԺԶ. Յովհաննէս արքեպիսկ.—Աւետարան Մատթէոսի. «Իբրև եկն Յիսուս ի Բեթանիա» (երես 12,

ԺԷ. Սարկաւագ—քարոզ. «Խնդրեսցուք հաւատով».

ԺԸ. Ս. Հայրապետը երկու սարկաւագների խնկարկութեամբ կարդում է «Աստուած որ տուիչդ ես ամենայն բարութեանց» խնկարկութեան աղօթքը. (երես 12).

ԺԹ. Սարկաւագը եղանակում է «Եւ ես խաղաղութեան» քարոզն և «օրհնեա Տէր».

Ի. Ս. Հայրապետը կարդում է, «Աստուած հարց և Տէր ողորմութեան» աղօթքը (երես 13).

ԻԱ. Դպիրները երգում են. «Սուրբ, սուրբ Տէր զօրութեանց երկնքորրեանցն. (երես 14).

ԻԲ. Սարկաւագները ձայնում են, «Եւ ես խաղաղութեան» և «օրհնեա Տէր».

ԻԳ. Ս. Հայրապետը կարդում է «Սուրբդ սրբոց և ամենայնի սրբութեանց տուիչ» աղօթքը. (երես 15).

ԻԴ. Սարկաւագներ.—«Եւ ես խաղաղութեան» և «օրհնեա Տէր».

ԻԵ. Ս. Հայրապետը կարդում է, «Տէր Աստուած որ մեծդ ես» աղօթքը (երես 16).

ԻԶ. Սարկաւագ թիւ «Եւ ես խաղաղութեան, վասն զատանելոյ (երես 7).

ԻԷ. Ս. Հայրապետը «զարձեալ մատուցանեմք քեզ թագաւոր յաւիտենական» աղօթքը, (երես 17)։

ԻԸ. Տ. Սարգիս եպիսկ.—Ընթերցուածս երգոց երգոյն. «Համբուրեսցէ զիս ի համբոյր». (երես 19).

ԻԹ. Տ. Յուսիկ արեպ.—Գիրք Զաքարիա Մարգարէի. «Պատասխանի եռու և ասեմ» (երես 19).

Լ. Տ. Մխիթար եպիսկ.—Ընթերցուածս ի գործոց առաքելոց» Զրանն առաքեաց որդւոցն Իսրայէլի» (երես 19).

ԼԱ. Տ. Աշոտ եպիսկ.—Աւետարան ըստ Մարկոսի «Եւ մինչ էր ի Բեթանիա» (երես 19).

ԼԲ. Դպիրներ—Շարական ԴՁ. «Որ յառաջագոյն յօրէն». ապա մեղեդի «Հայր ամենակալ» (երես 20),

ԼԳ. Տ. Մեսրոպ եպիսկ.—Գիրք երգոց երգոյն «Պարտէզ փակեալ» (երես 23).

ԼԴ. Տ. Կարապետ եպիսկ.—Գիրք Եսայի Մարգարէի «Եւ արասցէ Տէր Սարաւովթ» (երես 23).

ԼԵ. Տ. Եփրեմ եպիսկ.—Գիրք Յովհաննու առաքելոյ. «Զայս գրեցի Ձեզ» (երես 23).

ԼԶ. Դպիրներ ծանր—Ալէլուիա «վասն այսօրիկ օծ զքեզ» (երես 23—24).

ԼԷ. Տ. Խորէն եպիսկ.—Աւետարան Յովհաննու, «Եւ էր մերձ Զատիկն» (երես 24).

ԼԸ. Սարկաւագները երգում են Տ. Ներսէսի քարոզը (եր. 37). ապա ձայնով «Եւ ես խաղաղութեան» և «օրհնեա Տէր».

ԼԹ. Ս. Հայրապետը կարդում է «Տէր Ողորմութեան Հայր Լուսոյ» աղօթքը (երես 25).

Խ. Տ. Սուքիաս արքեպ.—«Երկնեցուցանեմ զքեզ նիւթ ձիթոյ (երես 26).

ԽԱ. Սարկաւագներ—օրհնեա Տէր.

ԽԲ. Ս. Հայրապետը կարդում է. «Արժանի և իրաւ է ճշմարտութեամբ» աղօթքը. (երես 26).

ԽԳ. Սարկաւագ.—Եւ ես խաղաղութեան և օրհնեա Տէր.

ԽԴ. Ս. Հայրապետը կարդում է, «Ս. Անուանդ անուն» (եր. 28): Լուսաբարապետը բանում է Միւռոնի կաթսայի կափարիչը, իսկ դպիրները երգում են. «Բացեր Տէր այսօր զդռնձգ երկնային», որի ժամանակ Հայրապետը լցնում է կաթսայի մէջ նախ ծաղիկների նիւթերը, ապա Բալասանը և վերջը հին Միւռոնը, երգելով ԴՁ. շարականը. «Առաքելոյ աղաւնոյ»: Զանգահար.

ԽԵ. Դպիրները երգում են. «Ամէն ալէլուիա».

ԽԶ. Ս. Հայրապետը առնելով Կենաց փայտը, տեառնագրում է և խառնում Միւռոնը ասելով. «օրհնեսցի և սրբեսցի Միւռոնս (երես 31).



ԽԷ. Դպիրներ «Ամէն ալէլուիա».

ԽԸ. Ս. Հայրապետը առնելով Աստուածամուխ ս. Գեղարդը տեառնագրում և խառնում է Միւռոնը երգելով. «օրհնեսցի և սրբեսցի».

ԽԹ. Ս. Հայրապետը առնելով ս. Գրիգոր Լուսաւորչի աջը, տեառնագրում է Միւռոնը երգելով եպիսկոպոսների ձայնակցութեամբ. «օրհնեսցի և սրբեսցի».

Ծ. Դպիրներ—Ամէն.

ԾԱ. Ս. Հայրապետը երգում է «Օրհնութիւն փառք և Հօր և.. (եր. 33). Լուսաբարապետը ծածկում է կաթսան իր կափարիչով և քողով.

ԾԲ. Սարկաւագները եղանակով. Եւ ես խաղաղութեան և օրհնեա Տէր.

ԾԳ. Ս. Հայրապետը կարդում է «Արժանի արա զմեզ» (եր. 33).

ԾԴ. Սարկաւագները ձայնով. Ամէն և օրհնեա Տէր.

ԾԵ. Ս. Հայրապետը կարդում է. «Քրիստոս Աստուած մեր», «Լցո զմեզ». «Զարդարեա զմեզ Տէր», «խրախացո և ուրախացո», «Զամբծութիւն և զսրբութիւն» «Տէր մեր և Փրկիչ Յիսուս, Քրիստոս.» աղօթքները (եր. 34, 36), իւրաքանչիւր աղօթքից յետոյ սարկաւագները երգում են Ամէն.

ԾԶ. Տ. Սուքիաս արքեպիսկ. կարդում է Աւետարան ըստ Մարկոսի «Եւ շրջէր շուրջ զգաւառօքն (երես 36).

ԾԷ. Սարկաւագ.—ս. Խաչիւս.

ԾԸ. Ս. Հայրապետը—Պանպանիչ և յոյս հաւատացելոց աղօթքը որից յետոյ շարունակում է ս. Պատարագը և աւարտուելուց յետոյ եպիսկոպոսները բռնած մասունքները նոյն կարգով, վարդապետներով և դպիրներով ուղեկցում են Ս. Հայրապետին Տաճարից մինչև Վեհարանի դրսի դուռը երգելով.

ԴՁ. Շարական «Որ զշնորհս Աստուածային». Արտաքին դրանը Ս. Հայրապետը պանպանիչով օրհնում է բոլորին և արձակում:

Ս. Միւռոնի կաթսան մի շարաթ շարունակ մնում է աւագ սեղանի բեմի վերայ ի համբոյր ուխտաւորների:

Մայր Տաճարի Լուսաբարապետ Ղեւոնդ եպիսկոպոս.

6

Ս. ՄԻՒՌՈՆԻ ԿԱԹՍԱՆ